Ձեր Երեխայի COVID-19-ի Դեմ Պատվաստման Գրքույկ

Գիրք՝ ձեր երեխային պատվաստմանը պատրաստելու և ձեր երեխայի COVID-19-ի դեմ պատվաստումը գրանցելու համար

County of Los Angeles Public Health

Եկեք անե՛նք սա

Իմացեք, թե ինչպես հեշտացնել ձեր երեխայի՝ COVID-19-ի դեմ պատվաստումը:

- Հարցեր, որոնք պետք է ուղղել բժշկին
- Ինչպես հեշտացնել այցելությունը
- Քայլեր՝ ձեր երեխային COVID-19-ի դեմ պատվաստմանը պատրաստելու համար
- Քայլեր՝ ձեր երեխային այցելության ժամանակ և դրանից հետո խնամելու համար

Ձեր Երեխայի Անունը

COVID-19-ի Դեմ Պատվաստման
Ամսաթվերը և Վայրերը

ԱՄՍԱԹԻՎ	ՎԱՅՐ

Բժշկի Անունը

Պահեք այս գրքույկը և այն վերցրեք ձեզ հետ ձեր երեխայի պատվաստմանը գնալիս:

Ձեր երեխային պատվաստելը նրան COVID-19-ից պաշտպանելու լավագույն միջոցն է:

Ձեր երեխային պատվաստելը կարող է օգնել նրան շարունակել հաճախել դպրոց և **ավելի ապահով** դարձնել նրա համար այնպիսի խմբային միջոցառումներին մասնակցելը, ինչպիսիք են

- ✓ Այցելություն ընտանիքին, ընկերներին և հարևաններին
- ✓ Այցելություն զվարճանքի կենտրոններ և համերգներ

Որո՞նք են ձեր երեխային COVID-19-ի դեմ պատվաստելու 2 մյուս առավելությունները:

1. _____

2. _____

Ինչպես է Գործում Պատվաստանյութը

- COVID-19-ի դեմ պատվաստանյութերն ապահով կերպով ցույց են տալիս մարմնին, թե ինչ տեսք ունի վիրուսը:
- Այդ դեպքում մարմինը գիտի, թե ինչ պաշտպանություն պետք է ստեղծի վիրուսից:
- Պատվաստանյութը մարմին սովորեցնում է հիշել վիրուսը և պատրաստ լինել պայքարելու դրա դեմ:
- Եթե ձեր պատվաստված երեխան շփվի վիրուսի հետ, նրա մարմինը պատրաստ կլինի պաշտպանվել դրանից:
- Պատվաստանյութը չի կարող ձեր երեխային վարակել COVID-19-ով:

Նույնիսկ եթե ձեր երեխան արդեն վարակվել է COVID-19-ով, կարևոր է, որ նա պատվաստվի:

Ունե՞ք COVID-19-ի դեմ պատվաստման վերաբերյալ հարցեր

Նշեք դրանք կամ գրեք ձեր անձնական հարցերը ստորև:

Բերեք սա ձեզ հետ և ուղղեք հարցերը բժշկին ձեր երեխայի պատվաստման ժամանակ:

- ☐ Արդյո՞ք իմ երեխան պետք է պատվաստվի, եթե նա արդեն վարակվել է COVID-19-ով:
- ☐ Ինչու՞ է իմ երեխային անհրաժեշտ մեկից ավելի դեղաչափ կամ խթանիչ դեղաչափ:
- ☐ Ի՞նչ պետք է ակնկալեմ պատվաստումից հետո:
- ☐ Որքա՞ն ժամանակ է պահանջվում, որպեսզի պատվաստանյութը պաշտպանի իմ երեխային COVID-19-ից:

1. _____

2. _____

Այս հարցերի պատասխանների և լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք վերջին էջում նշված աղբյուրները կամ սկանավորեք այս QR ծածկագիրը:

Քայլեր, Որոնք Անհրաժեշտ է Ձեռնարկել ՆԱԽՔԱՆ Ձեր Երեխայի Պատվաստումը

- Բացատրեք ձեր երեխային, թե ինչ պետք է ակնկալել պատվաստման ժամանակ:

- Տեղեկացրեք նրան, որ նա կարող է զգալ «թեթև ծակոց», «ճնշում» կամ «հրոց»: Խուսափեք «ցավ», «ներարկում» կամ «ասեղ» բառերից:

- Բացատրեք նրան, որ պատվաստումը կարող է օգնել պաշտպանել նրան և առողջ լինել:

- Եթե ձեր երեխան բավականաչափ մեծ է, կարող եք միասին ծրագրել նրա այցելությունը: Օրինակ՝ օգնեք նրան կատարել հանգիստ շնչելու վարժություններ, որոնք նա կարող է կատարել պատվաստվելիս:

Քայլեր, Որոնք Անհրաժեշտ է Ձեռնարկել ՆԱԽՔԱՆ Ձեր Երեխայի Պատվաստումը

- Բերեք թեթև ուտեստ և ըմպելիք՝ սպասելը հարմարավետ դարձնելու համար:

- Բերեք խաղալիք, գիրք կամ ծածկոց, որպեսզի օգնեք նրան ապահով և հանգիստ զգալ պատվաստման ժամանակ:

Նշեք այն իրերը, որոնք դուք կբերեք ձեր երեխայի պատվաստման այցելությանը, որպեսզի օգնեք նրան հանգիստ և հարմար զգալ.

- ☐ _____
- ☐ _____
- ☐ _____

Քայլեր, Որոնք Անհրաժեշտ է Ձեռնարկել ՆԱԽՔԱՆ Ձեր Երեխայի Պատվաստումը

- Շեղեք ձեր երեխայի ուշադրությունը և հանգստացրեք ձեր երեխային՝ գրկելով նրան, երգ երգելով, պատմություն պատմելով կամ շշնջալով:

- Հանդարտեցրեք ձեր երեխային ձեր ժպիտով և նրա աչքերին նայելով:

- Կրծքով կերակրելը, շշով կերակրելը կամ ծծակի օգտագործումը կարող է երեխային հանգստացնելու և հանդարտեցնելու հիանալի միջոց լինել:

- Օգնեք և հանգստացրեք երեխային, եթե նա վրդովվի. թող նա իմանա, որ լաց լինելը բնական է:

Քայլեր, Որոնք Անհրաժեշտ է Ձեռնարկել Ձեր Երեխայի COVID-19-ի Դեմ Պատվաստումից ՀԵՏՈ

- Հիշեցրեք ձեր երեխային, թե որքան լավ է նա իրեն դրսևորել այցի ընթացքում և ինչպես պատվաստանյութը կօգնի պաշտպանել նրան:

- Մնացեք պատվաստման վայրում հսկման համար, որպեսզի համոզվեք, որ ամեն ինչ լավ է:

- Պատվաստման վայրից հեռանալուց հետո միասին որևէ հատուկ բան արեք. գնացեք այգի, զբոսնեք կամ խաղ խաղացեք:

Նշեք 3 միջոց, որոնք օգնել են ձեր երեխային հանգիստ լինել և հարմարավետ զգալ իր պատվաստման ժամանակ.

1. _____

2. _____

3. _____

Հիշեք սրանք հաջորդ այցի ժամանակ:

Պատվաստման Կողմնակի Ազդեցությունները

- Ոչ բոլոր երեխաների մոտ են դրսևորվում կողմնակի ազդեցություններ, սակայն դրանք շատ տարածված և բնական են:

- Կողմնակի ազդեցությունները ներառում են ցավ, այտուց կամ կարմրություն պատվաստանյութի ներարկման հատվածում, հոգնածության զգացողություն, գլխացավ, մկանային ցավեր, սրտխառնոց, ջերմություն կամ դող:

- Կողմնակի ազդեցությունները նշան են, որ ձեր երեխայի մարմինը ստեղծում է պաշտպանություն վիրուսի դեմ:

Կողմնակի ազդեցությունները պետք է անհետանան մի քանի օրվա ընթացքում:

Պատվաստման Կողմնակի Ազդեցություններին Հետևելը

- Նշեք ցանկացած կողմնակի ազդեցություն, որը դրսևորվել է ձեր երեխայի մոտ պատվաստումից հետո և կատարեք ցանկացած այլ նշումներ:
- Տրամադրեք սա ձեր բժշկին հաջորդ այցելության ժամանակ:

Կողմնակի Ազդեցություններ

- ☐ Բացակայում են
- ☐ Ցավ կամ կարմրություն ներարկման հատվածում

- ☐ Ջերմություն
- ☐ Դող
- ☐ Մկանային Ցավեր

- ☐ Գլխացավ
- ☐ Հոգնածության Զգացողություն

Նշումներ՝ _____

_____

_____

_____

Քայլեր, Որոնք Կօգնեն Մեղմել Տարածված Կողմնակի Ազդեցությունները

- Պատվաստանյութի ներարկման հատվածում դրեք մաքուր, սառը, խոնավ կտոր, որը կօգնի նվազեցնել ցավը:

- Ապահովեք, որ ձեր երեխան շատ հանգստանա:

- Եթե նա ունի ջերմություն, ապահովեք, որ նա խմի առատ հեղուկներ և թեթև հագնվի:

- Հարցրեք նրա բժշկին առանց դեղատոմսի տրվող դեղամիջոցների համապատասխան չափաբաժինների մասին, ինչպիսիք են՝ Tylenol®-ը (ացետամինոֆեն) կամ Motrin® -ը կամ Advil® -ը (իբուպրոֆեն)՝ ցավը, ջերմությունը, գլխացավը կամ անհանգստությունը մեղմացնելու համար:

- Կապ հաստատեք ձեր բժշկի հետ, եթե երեխայի կողմնակի ազդեցությյունները վատթարանում են, մտահոգում են ձեզ կամ տևում են 2 օրից ավել:

Նշեք 2 միջոց, որոնք դուք կարող եք անել, որպեսզի օգնեք ձեր երեխային ավելի լավ զգալ, եթե նրա մոտ դրսևորվեն պատվաստման տարածված կողմնակի ազդեցություններ.

1. _____

2. _____

Ե՞րբ զանգահարել ձեր բժշկին

COVID-19-ի դեմ պատվաստման հետևանքով առաջացող լուրջ կողմնակի ազդեցությունները կամ ալերգիկ հակազդեցությունները շատ հազվադեպ են:

- Անմիջապես դիմեք բուժօգնության, եթե ձեր երեխան ունի հետևյալ ախտանիշներից որևէ մեկը.
    - Ցավ Կրծքավանդակում
    - Շնչարգելություն/հևոց
    - Սրտի արագ բաբախ, թրթռոց և ուժգին սրտի զարկի զգացողություն:

Հաջորդ Քայլերը

- Ստացեք COVID-19-ի դեմ պատվաստանյութի հաջորդ առաջարկվող դեղաչափը, որն անհրաժեշտ է ձեր երեխային պաշտպանելու համար:
- Սա կարող է ներառել խթանիչ դեղաչափեր, որոնք հիշեցնում են մարմնին, թե ինչ տեսք ունի վիրուսը, ինչպես նաև ավելի լավ պաշտպանություն ապահովելու համար:
- Ժամանակին ստացեք մյուս պատվաստանյութերի բոլոր առաջարկվող դեղաչափերը, որոնք անհրաժեշտ են կամ առաջարկվում են ձեր երեխային:

Տեղեկացեք ձեր բժշկից, թե որոնք են ձեր երեխայի COVID-19-ի դեմ հաջորդ պատվաստման ամսաթվերը և գրեք դրանք ստորև:

ԱՄՍԱԹԻՎ	Հիմնական կամ Խթանիչ Դեղաչափ

Շարունակեք Պաշտպանվել COVID-19-ից

Բացի պատվաստվելուց, օգտագործեք բոլոր հասանելի գործիքները՝ ձեզ և ձեր երեխային COVID-19-ով վարակվելուց պաշտպանելու համար՝ կատարելով հետևյալը.

- Կրեք դեմքը լավ գրկող դիմակ (այն երեխաների դեպքում, որոնք կարող են ապահով կրել այն) փակ հանրային վայրերում:
- Խուսափեք մարդաշատ փակ տարածքներից և վատ օդափոխվող վայրերից:
- Բարելավեք օդի հոսքը ձեր տանը՝ բաց պահելով պատուհանները:
- Հնարավորության դեպքում ընկերների և ընտանիքի հետ հավաքվեք բացօթյա տարածքում:

COVID-19-ի Դեմ Պատվաստման Հաղթող

Այս Վկայականը Տրվում է՝

_____

Ամսաթիվ՝ _____

Շնորհակալություն, որ օգնում եք պաշտպանել ձեզ և
ձեր ընտանիքը COVID-19 վիրուսից:

COLORING SHEET

Vaccines are safe, free and help protect you from COVID-19



Vaccinate ALL 58

1-833-422-4255 | myturn.ca.gov

Գունազարդման էջ

Պատմեք այս պատվաստման պատմությունը ձեր երեխային և թույլ տվեք նրան ներկել այն:

COVID-19-ի դեմ պատվաստման գերհերոս. Ջեսսիի պատմությունը



Ջեսսին պատրաստվում է պատվաստվել և փոքր-ինչ նյարդային է:

«Ինչո՞ւ է ինձ անհրաժեշտ այս պատվաստումը»:



«Պատվաստանյութերը ասես շատ հատուկ տեսակի գերբնական ուժ լինեն, Ջեսսի»:



«Շատ հիվանդություններ առաջանում են մանրէների պատճառով, որոնք չափազանց փոքր են, որպեսզի մենք դրանց տեսնենք»:

«Պատվաստանյութերը գործում են ինչպես անտեսանելի ուժի մի դաշտ, որը պաշտպանում է քեզ հիվանդությունից»:

«Պատվաստանյութերն այնքան հզոր են, որ նույնիսկ օգնում են պաշտպանել քեզ շրջապատող մարդկանց»:



Ջեսսին իր հետ բերեց իր սիրելի խաղալիքը և շնչեց փորով, որպեսզի հանգստանա: Մի փոքրիկ ծակոց թևին և վերջ: «Դա հե՛շ էր»:

Ջեսսին այժմ պատվաստման գերհերոս է: Նրանք օգնում են պաշտպանել իրենց համայնքը հիվանդություններից:

Illustration: Shoshannah Greene

Jesse's story and graphics used with the permission from BC Centre of Disease Control.

COVID-19-ի Աղբյուրներ

Խնդրում ենք օգտվել ստորև ներկայացված աղբյուրներից՝ COVID-19-ի դեմ Պատվաստման մասին ավելին իմանալու համար

Աղբյուրներ	Հղում
Լոս Անջելեսի Հանրային Առողջության Վարչության COVID-19-ի Աղբյուրներ	VaccinateLACounty.com
Լոս Անջելեսի Հանրային Առողջության Վարչության COVID-19-ի Հաճախ Տրվող Հարցեր (ՀՏՀ)	ph.lacounty.gov/media/Coronavirus/vaccine/resources.htm#FAQs Կամ սկանավորեք QR ծածկագիրը ստորև
Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնների՝ COVID-19-ի Դեմ Պատվաստանյութեր Երեխաների և Դեռահասների Համար	cdc.gov/coronavirus/2019-ncov/vaccines/recommendations/children-teens.html
V-safe՝ Պատվաստմանը Հաջորդող Առողջական Վիճակը Ստուգող Համակարգ	cdc.gov/coronavirus/2019-ncov/vaccines/safety/vsafe.html
Առաջարկվող Պատվաստանյութեր Նորածինների և Երեխաների Համար, Ծնունդից Մինչև 6 Տարեկան	cdc.gov/vaccines/schedules/easy-to-read/child-easyread.html
Առաջարկվող Պատվաստանյութեր 7-ից 18 Տարեկան Երեխաների Համար	cdc.gov/vaccines/schedules/easy-to-read/adolescent-easyread.html
COVID-19-ի Դեմ Համայնքներում Պատվաստումների Մասին Տեղեկություններ	http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/vaccine/outreach.htm

Սկանավորեք աջ կողմում գտնվող QR ծածկագիրը՝ Հաճախ Տրվող Հարցերը տեսնելու համար:

Պատվաստման Վերաբերյալ Հավելյալ Տեղեկությունների համար այցելեք՝

VaccinateLACounty.com